ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՐՏԱՀԵՐԹ՝ ՀԵՌԱԿԱ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՆԻՍՏԻ

ք. Երևան **25.10.2022թ.**

Հիմք ընդունելով Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կառավարման խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) նախագահի 2022 թվականի հոկտեմբերի 19-ի N 11-Լ որոշումը Տեսչական մարմնի 2022 թվականի պահպանման ծախսերի նախահաշվում փոփոխություններ կատարելու հարցը հավանություն արժանացնելու նպատակով անցկացվել է արտահերթ նիստ՝ հեռակա քվեարկությամբ:

Հեռակա քվեարկությունը սկսվել է 2022 թվականի հոկտեմբերի 24-ին ժամը 09:00 և ավարտվել 2022 թվականի հոկտեմբերի 25-ին ժամը 18:00:

Քվեարկության նյութերը սահմանված ժամկետում ներկայացվել են Խորհրդի անդամների էլեկտրոնային հասցեներին:

Օրակարգ.

1. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի 2022 թվականի պահպանման ծախսերի նախահաշվում փոփոխություններ կատարելուն:

Քվեարկությանը մասնակցել են՝

Ն. Մկրտչյան	- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար (Խորհրդի նախագահ)
Լ. Նանուշյան	- ՀՀ առողջապահության նախարարի առաջին տեղակալ
Ա. Խոջոյան	- ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ
Ա. Սարգսյան	- ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ
Վ. Հովհաննիսյան	- ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
Ժ. Մայիլյան	- «Իրական աշխարհ, իրական մարդիկ» սոցիալական հասարակական կազմակերպության նախագահ
Տ. Քեյան	- «ՓՄՁ համագործակցության ասոցիացիա» հասարակական կազմակերպության աջակցության ծրագրի ղեկավար

Շ. Դանիելյան - Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի (ԵՊԲՀ) աշխատակազմի ղեկավար

Ս. Սահակյան - Հայաստանի ամերիկյան համալսարանի Ջերալդ և Փաթրիշա առողջապահական գիտությունների ֆակուլտետի ավագ գիտաշխատող

Քվեարկությունը համարվում է կայացած:

Քվեարկության արդյունքում.

1) Ն. Մկրտչյանը օրակարգի հարցին քվեարկեց կողմ,

2) Լ. Նանուշյանը օրակարգի հարցին քվեարկեց կողմ,

3) Ա. Խոջոյանը օրակարգի հարցին քվեարկեց կողմ,

4) Ա. Սարգսյանը օրակարգի հարցին քվեարկեց կողմ,

5) Վ. Հովհաննիսյանը օրակարգի հարցին քվեարկեց կողմ (ներկայացրել է առաջարկություն),

6) Ժ. Մայիլյանը օրակարգի հարցին քվեարկեց կողմ,

7) Տ. Քեյանը օրակարգի հարցին քվեարկեց կողմ,

8) Շ. Դանիելյանը օրակարգի հարցին քվեարկեց կողմ,

9) Ս. Սահակյանը օրակարգի հարցին քվեարկեց կողմ:

Քվեարկության արդյունքը՝ օրակարգի հարցին **9 կողմ, 0 դեմ:**

Սույն արձանագրությանը ծանոթանալուց և համաձայնություն տալուց հետո Խորհուրդը որոշեց.

1. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի 2022 թվականի պահպանման ծախսերի նախահաշվում փոփոխություններ կատարելուն:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Ն. ՄԿՐՏՉՅԱՆ**

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **Գ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**